ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 45

22.12.2017Թ. ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին որոշեց.

Հաստատել 22.12.2017թ. թիվ 11 նիստի օրակարգը՝

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 46-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ կետերի ,«Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ *ավագանին որոշեց.*

1.Սահմանել 2018թվականի

ա)տեղական տուրքերի դրույքաչափերը՝համաձայն թիվ 1 հավելվածի,

բ)տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ՉԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված թիվ 1
Շահումյան համայնքի ավագանու
22 դեկտեմբերիի 2017թ.
թիվ 46 -Ն որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1)	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար.	
	<u>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝</u> մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15.000դրամ
	<u>բ. սույն կետի << ա >> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</u>	
	- 200-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30.000դրամ
	- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50.000դրամ
	-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50.000դրամ
	- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100.000դրամ
	Գ. *<u>Ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝</u>*	
	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	3.000դրամ
	- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5.000դրամ
2)	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման , ուժեղացման ,արդիականացման և բարեկարգման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
	ա. չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3.000դրամ
	բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների վերնակառույցների ,շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և, բացի սույն կետի <<ա>>ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,	
	գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն	

	ընդլայնող այլ կառույցների (այդ թվում 'ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա, սույն օրենքի իմաստով ,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.	
3)	Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար	5.000դրամ
4)	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200.000դրամ
5)	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	60.000դրամ
6)	Համայնքի վարչական տարածքում *Ոգելից և ալկոհոլային խմիչքների և* (կամ) ծխախոտի արտադրանքի *վաճառքի թույլտվության համար՝* *ա. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար 'յուրաքանչյուր եռամսյակի համար՝* ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	2.000դրամ
	-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10.100դրամ
	-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13.100 դրամ
	- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20.100դրամ
	-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25.100դրամ
	-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	45.100դրամ
	բ. *Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ ուրաքանչյուր եռամսյակի համար՝*	
	- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	2.000դրամ
	- 26 – ից մինչև 50 քառակուսի մետր.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10.100դրամ
	-50-ից ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13.100դրամ
	- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20.100դրամ
	-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25.100դրամ

	- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	45.100դրամ
7)	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քմ- համար՝	350 դրամ
8)	Համայնքի վարչական տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին,խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
	ա. առևտրի օբյեկտների համար	5000դրամ
	բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	25.000դրամ
	գ.բաղնիքների (սաունաների) համար	200.000դրամ
	դ.խաղատների համար	500.000դրամ
	ե.շահումով խաղերի համար	250.000դրամ
	զ.վիճակախաղերի համար	100.000դրամ
9)	Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
	ա. հիմնական շինությունների ներսում՝	
	- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1.000դրամ
	- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5.100դրամ
	- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10.100դրամ
	- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15.100դրամ
	- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	20.100դրամ
	- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	30.100դրամ
	բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝	
	- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	500դրամ
	- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1.100դրամ
	- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2.100դրամ
	- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4.100դրամ
	- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8.100դրամ
	- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15.100դրամ
10)	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
	ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2.000դրամ
	բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	3.500դրամ

11)	գ. սոցիալական գովազդի համար՝ դ. այլ արտաքին գովազդի համար՝ ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով Համայնքի խորհրդանիշը (անվանում), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	0 դրամ 1.500դրամ 375դրամ 150դրամ 100.000դրամ
12)	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10.000դրամ

Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ ,10-րդ, 11-րդ, 12-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ,4-րդ կետով սահմանված դրույքաչափը՝0.75 գործակցի կիրառմամբ,իսկ 6-9-րդ կետերով սահմանված դրույքաչափերը՝ 0.3 գործակցի կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 2
Շահումյան համայնքի ավագանու
22 դեկտեմբերի 2017թ.
թիվ 46-Ն որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճարը սահմանել	3.000դրամ
2.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար սահմանել ամսեկան	60 դրամ
2.1	Համայնքի առևտրի,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համարամսեկան	5դրամ
2.2	Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար՝ամսեկան	5 դրամ
2.3	Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային շինությունների 1քմ-ի համար՝ամսեկան	3դրամ
2.4	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ՝ -ըստ ծավալի 1խմ-ի համար -ըստ զանգվածի 1 տոննայի համար	3.000 դրամ 6.000 դրամ

3.	**<<Շահումյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան**	5000դրամ
4.	**<<Շահումյանի արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում յուրաքանչյուր երեխայի համար ըստ բաժինների ամսեկան՝** -դաշնամուրային - վոկալային - նկարչության - պարի - քանոնի - դհոլ - դուդուկ/շվի/,կլառնետ - նախապատրաստական դասարան	**3000 դրամ** 3500դրամ 2500դրամ 3000դրամ 2800դրամ 3500դրամ 3000դրամ 3000դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ